Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի ԹԻՎ ԹԻՎ 10-Ա, 11-Ն, 12-Ա-16-Ա, 17-Ն ԵՎ 18-Ա-22-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 11-Ն որոշման նախաբանում անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերին, քանի որ որոշման 7-րդ կետի փոփոխություններով համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից գումարներ են ուղղվել համայնքի բյուջեի չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորմանը:

Թիվ 13-Ա որոշման նախաբանում հղումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին թերի է կատարված: Անհրաժեշտ էր հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի նաև 3-րդ մասին:

Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ««Պաշտոնային դրույքաչափ» սյունակի» բառերը փոխարինել ««Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/» և ««Աշխատավարձի չափը» սյունակների» բառերով:

Որոշման 2-րդ կետով կատարվող լրացումներն անհրաժեշտ է գրառել կետերի կամ ենթակետերի տեսքով: Բացի այդ, որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված:

Թիվ 14-Ա որոշման նախաբանում հղումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթին սխալ է կատարված: Անհրաժեշտ է հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասին: Բացի այդ, որոշման 1-ին կետի 1-ին ենթակետն անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ:

Թիվ 15-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 33-րդ հոդվածների դրույթներին: Բացի այդ, որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասին:

Թիվ 16-Ա որոշման և որոշմամբ հաստատված հավելվածում «գերեվարված» բառը փոխարինել «գերեվարվածի» բառով:

Թիվ 18-Ա որոշման՝

1) վերնագրում հղում կատարելու անհրաժեշտություն չկա,

2) հղումը թերի է կատարված,

3) 1-ին կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին,

4)2-րդ կետում անհրաժեշտ էր գրառել տեղեկատվություն ընտանիքի կազմի վերաբերյալ,

5) 3-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին:

Թիվ 19-Ա որոշման 4-րդ կետը և թիվ 20-Ա որոշման 3-րդ կետը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին:

Թիվ 21-Ա որոշման նախաբանում հղումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին թերի է կատարված։ Անհրաժեշտ է հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի նաև 3-րդ մասին։

Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով։ Բացի այդ, անհրաժեշտ էր նշել թե լրացումը որ կետի դրույթից հետո է կատարվել։

Թիվ 22-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասին։ Բացի այդ, որոշման՝

1) վերնագրում «3-րդ հավելվածի» թիվը և բառերը ավելորդ են,

2) հղումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին թերի է կատարված,

3) հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերին։

Որոշումները մարզպետարան առաքվել են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ։

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
19.04.2021թ.